«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Մեթոդների կիրառումը երաժշտության դասերի ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Անի Հակոբյան

անուն, ազգանուն

<<ՊՈԱԿ>> Մյասնիկյանի «Արայի» անվան միջնակարգ դպրոց

դպրոց

Ղեկավար՝ Սոնիկ Սմբատյան

անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2023

Բովանդակություն

1. Ներածություն…….3
2. Մեթոդների կիրառումը երաժշտության դասերի ընթացքում……4
3. Դասի պլան …….8
4. Եզրակացություն……14
5. Օգտագործված գրականության ցանկ ……15

Ներածություն

Կյանքի առաջընթացը նոր պահանջներ է դնում երաժշտական դաստիարակության առջև։ Հանրակրթական դպրոցում երաժշտության դասավանդումը դրվում է նոր պահանջների, նոր խնդիրների լուծման հիմքի վրա։ Այս իմաստով, առաջին դասարանից սկսած սովորողներին պետք է ներգրավել երաժշտության մեծ ու գեղեցիկ աշխարհը, այնպես, որ այն զարգացնի ոչ միայն երաժշտական ունակություններն ու կատարողական հմտությունները, այլև գեղագիտական ճաշակը,նպաստի կրտսեր դպրոցականի մտածողության զարգացմանը։

Մեթոդների կիրառումը երաժշտության դասերի ընթացքում

Կոմիտասն ասել է. << Երաժշտությունը տիեզերական այն լեզուն է, որով <<առանց թարգմանի>> մարդկանց հոգիները հաղորդակցվում են>>: Այս, աշխարհում միայն մի գիր կա, որը հասկանալի է բոլոր ժողովուրդներին. դա երաժշտությունն է:

Տարրական դպրոցի <<Երաժշտություն>> առարկայի չափորոշիչը պահանջում է կատարել երգը, պարը, ունկնդրել, զարգացնել նոտաներով երգելու կարողություններ, երաժշտառիթմական շարժումը: Բացի ծրագրային նյութերից կարելի է ինքնուրույն ընտրել անվանի կոմպոզիտորների բարձրարժեք ստեղծագործություններ, բայց այդ տարիքի համար մատչելի ստեղծագործություններ, և ուսուցանել:

Այս բոլորով հանդերձ, երաժշտության միջոցով ուսուցիչը պետք է կրթի, դաստիարակի երեխային, նպաստի նրա մտածողության զարգացմանը:

Երգեցողությունը երեխայի երաժշտական գործունեության ամենամասսայական, մատչելի և կարևոր ձևերից է: Երգեցողության միջոցով նա մուտք է գործում երաժշտական հնչյունների աշխարհը: Սովորողները երաժշտական առաջին տպավորություններն ուսապրումները ստանում են երգեցողությունից:

Սովորողների երաժշտական զարգացման մակարդակն անհավասար է: Լինում են բնականից օժտված երեխաներ, որոնք մեծ հետաքրքրություն են դրսևորում երաժշտության նկատմամբ: Դրանց կողքին կան երաժշտական ավելի թույլ ունակություններ ունեցողներ, որոնք պասիվ և անտարբեր են դասի ընթացքում:

Ուսուցիչը պետք է նման երեխաներին պահի ուշադրության կենտրոնում, երբեք չպետք է ասել, թե նրա լսողական և ձայնային տվյալները վատ են: Երեխան կընկճվի և կկորցնի վստահությունն իր ուժերի նկատմամբ: Դրա համար թույլ զարգացած երաժշտական տվյալներ ունեցող երեխաներին պետք է նստեցնել զարգացածների կողքին, որպեսզի նրանց ազդեցությամբ ակտիվանա նաև այդ երեխաների երաժշտական գործունեությունը: Սխալ երգող երեխային երգեցողության մասնակից չդարձնելը մեթոդապես անթույլատրելի է, քանի որ երաժշտական ընդունակությունները զարգանում են միայն նրա ակտիվ երաժշտական գործունեության ընթացքում: Ուսուցիչը պետք է հաշվի առնի, որ տարրական դպրոցի սովորողների ձայնածավալը հիմնականում չի անցնում առաջին օկտավայի սահմաններից՝ դո, ռեից մինչև սի ներկրորդ օկտավայի դո:

Երեխաներին պետք է ծանոթացնել խմբական երգեցողության չորս հիմնական նախադրյալներին՝ ուշադրություն, շունչ առնել, երգի սկիզբ, երգի ավարտ: Ճիշտ և գեղեցիկ երգեցողության հասնելու համար անհրաժեշտ է կատարել ձայնամարզման աշխատանքներ: Որպես ձայնավարժությունների օրինակներ կարելի է օգտագործել երեխաների իմացած երգերից առանձին հատվածներ, ուսուցանել ժողովրդական փոքրիկ երգեր, շուտասելուկներ, երաժշտական հանելուկներ: Ձայնավարժությունների կարելի է կատարել նաև ձայնավոր և բաղաձայն հնչյուններով:

Ուսուցիչը պետք է նախապես ծանոթացնի ուսուցվող երգի բովանդակությանը, հակիրճ տեղեկություններ տա խոսքի և երաժշտության հեղինակների մասին: Ուսուցման կարևոր նախապայմաններից է երգի առաջին կատարումը: Երգը պետք է կատարել այնպիսի ներգործությամբ, որ երեխաների մեջ այն սովորելու

ջերմ ցանկություն առաջանա: Ուսուցիչը պետք է երգի մաքուր հնչերանգով, գեղեցիկ ձայնով, քանի որ երեխաները նրա ձայնը ընդօրինակում են այնպես, ինչպես լսում են: Հետո սովորողներին կարելի է ուղղել հարցեր.

ա) Ի՞նչ զգացումներ ձեր մեջ արթնացան այս երգը լսելիս:

բ) Ի՞նչ տրամադրություն ձեզ համակեց:

գ) Ձեր երևակայության մեջ ի՞նչ պատկերներ առաջացան:

դ) Ի՞նչի մասին էիք դուք մտածում:

Վառ պատկերները, որոնք ծնվում են երեխայի պատկերացման մեջ երգի ազդեցության տակ, աշխուժացնում են միտքը: Սովորողները ձգտում են բառերով նկարագրել այն, ինչ ստեղծել է երևակայությունը, ինչ իրենք են զգում: Ես ջանում եմ հասնել այն բանին, որ բոլոր երեխաները անկաշկանդ հաղորդեն իրենց տպավորությունը: Օրինակ, <<Դեղնած դաշտերին իջել է աշուն>> երգը ուսուցանելիս, սովորողները պատկերացնում են աշնանային տեսարան, աշնանային գույնզգույն թափվող տերևներ:

Սովորողներին կարելի է առաջարկել իրենց ապրած տպավորություններն արտահայտել նաև նկարչության միջոցով: Երգը հաստատում է աշխարհը բանաստեղծական տեսնելու հնարավորությունը:

Այսօր արդիական են դարձել նաև հայրենասիրական երգերը: Սովորողներն առնչվում են դաժան իրականության հետ: Ինչպես անցյալում, այժմ էլ հայ զինվորը զենքը ձեռքին հերսական պայքար էմղում թշնամու դեմ, պաշտպանում իր հայրենիքը, իր հարազատ տունը: Միայն երգն իր դյութիչ եղանակով կարող է այս տեսարանները հասցենել գիտակցությանն ու սրտին: Միայն երգը կարող է բացել ժողովրդի հոգու գեղեցկությունը:

Շատ կարևոր է սովորողների մեջ ձևավորել երաժշտություն ունկնդրելու կուլտուրա, երաժշտությունը լսելու, հասկանալու և նրանից ստացած տպավորությունը ներկայացնելու, մեկնաբանելու

կարողություն: Պետք է երաժշտությունը լսել մինչև վերջ, չխոսել, չընդհատել, հարցեր տալ միայն երաժշտությունն ավարտելուց հետո: Երաժշտության ավարտից հետո միայն պետք է պատմել ունկնդրումից ապրած տպավորությունների մասին, ինչպիսի՞ն է երաժշտական ստեղծագործության բնույթը՝ ուրախ, թախծոտ, տխուր, տեմպը՝ արագ, հանդարտ, դանդաղ, ո՞վ է կատարում այն՝ մենակատա՞րը կամ երգչախումբը, ի՞նչ նվագարան էր հնչում, ի՞նչ գույներով կներկայացնեն այդ երաժշտությունը:

Սովորողները պետք է ունկնդրեն ոչ միայն փոքրածավալ երաժշտական ստեղծագործություններ, այլ նաև հատվածներ մենածավալ երաժշտական ստեղծագործություններից՝ օպերայից, բալետից, սինֆոնիայից և այլն:

Դասի պլան

Դասարան- 2 -րդ

Առարկա- Երաժշտություն

Դասի թեմա – << Երգը օպերայում>>

Ունկնդրել Մ. Մազմանյանի «Ճուտիկ» օպերայից հատված

Ուսուցանել «Թխսի և կատվի կռիվը» երգը

Դասի նպատակները՝

Ուսուցանող՝

- Ծանոթացնել հեքիաթին
- Սովորեցնել
  - ✓ «Թխսի և կատվի կռիվը» երգը
  - ✓ կատարել երգը հուզական և արտահայտիչ
  - ✓ սովորեցնել երգը ունկնդրելու և ճանաչելու կարողությունը:

Զարգացնող՝

- Զարգացնել երժշտական վերլուծական կարողությունը,սեփական կարծիքը արտահայտելու ընդունակությունը
- Դաստիարակել հետաքրքրություն հայկական դասական երաժշտության հանդեպ:

Կիմանա

- ✓ Սովորած երգի բառերը
- ✓ Օպերայի հեղինակի անունը

Կկարողանա

- ✓ Մաքուր հնչերանգով երգել
- ✓ Ունկնդրած հատվածները վերլուծել

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Հարցերի միջոցով ճշտել երեխաների պատկերացումները երգերի տեսակների մասին՝ կազմել մտագրոհ:



Իմաստի ընկալման փուլ

Խոսել «Երգը օպեռայում» թեմայի և «Ճուտիկ» հեքիաթի բովանդակության մասին: Ուսնկնդրել «Աքլորիկի,թխսի և ճուտիկների երգը» և «Թխսի ու կատվի կռիվը» երգերը «Ճուտիկը» օպերայից, որոշել բնույթն ու տրամադրությունը և արտահայտչամիջոցները: Երեխաների հետ միասին կատարել վերլուծական աշխատանք, հարցերի միջոցով օգնել երեխաներին արտահայտել իրենց կարծիքները.

1. Ի՞նչ տրամադրություն ունեն երգերը:
2. Ի՞նչ նվագարաններ են հնչեցնում մեղեդիները:

Սովորել «Թխսի և կատվի կռիվը» երգը, կատարել երգը դերերով, երաժշտառիթմական շարժումներով:

Սովորողներին բացատրում եմ, որ օպերայի մեջ կոմպոզիտորը կերպարները ներկայացնում և բնութագրում է մեղեդու միջոցով, և այդ մեղեդիները կոչվում են լեյթմոտիվներ: Ուշադրություն դարձնելով լեյթմոտիվների վրա՝ երեխան զգում և հասկանում է, որ <<Թխսի ու կատվի կռիվը>> երգի մեջ թխսի կերպարը ներկայացված է ուրախ, հարազատ, հոգատար բնույթով և քնքուշ ձայնով, իսկ կատվի լեյթմոտիվը՝ վտանգավոր բնույթով, ճուտիկներինը՝ նորբ և ուրախ ձայնով: Դեռ

երաժշտություն առաջին հնչյուններից զգացվում է չարի ու բարու հակամարտությունը։ Օպերայի վերջում հնչում է թխսի և ճուտիկների ուրախ պարը ։ Երեխան հասկանում է, որ կոմպոզիտորը երաժշտության արտահայտչամիջոցների և նվագարանների միջոցով ստեղծում է տարբեր բնույթի կերպարներ։ Հեքիաթի առկայությունը նպաստում է երաժշտության ընկալմանը։ Ունկնդրումից հետո սովորողները կարող են իրենց տպավորություններն արտահայտել նկարելով։ Բազմազան են ունկնդրման ձևերը.

ա) միայն երաժշտության ունկնդրում և վերլուծություն,

բ) ունկնդրում սահիկների դիտումով

գ) ունկնդրում բանաստեղծության կամ կեքիաթի ընթերցումով

դ) ունկնդրում ռիթմական շարժումներով

ե) ունկնդրում նկարչության զուգորդմամ։

Մի քանի երաժշտական ստեղծագործություններ ունկնդրելուց հետո, կարելի է ստուգել սովորողների գիտելիքները <<Գուշակիր՝ մեղեդին>> խաղի մջոցով։ Երեխաները հաճույքով գուշակում են սովորած և ունկնդրած երաժշտական հատվածները։ Ուսուցչի համար պարզ է դառնում նյութի յուրացման աստիճանը։ Սովորողները կարողանում են ճանաչել դպրոցում ունկնդրած երաժշտությունը, երբ այն հնչում է տանը ռադիոյով կամ հեռուստատեսությամբ։ Տարրական դպրոցի սովորողները մեծ հաճույքով են ունկնդրում Ա. Խաչատրյանի, Կոմիտասի, Ա. Բաբաջանյանի, Մոցարտի. Էդ. Գրիգի, Չայկովսկու ստեղծագործությունները։ Սովորողներհ հաղորդակից են լինում, ոչ միայն հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների, այլ ռուս և եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններին։

Երգելով ու նկարելով, ունկնդրելով և վերլուծելով՝ սովորողը մտնում է երաժշտության կախարդական աշխարհը, որտեղ հոկվում է նրա երաժշտական ճաշակը, ձևավորվում է արժեքային համակարգը։ Իսկ դա ուսուցչի աշխատանքի ամենամեծ արդյունքն ու վարձատրությունն է։ Սովորողների երաժշտական դաստիարակության հարցում մեծ տեղ են զբաղեցնում պարերը։ Հայ ժողովուրդը հարուստ է պարերով։ Դրանք միշտ էլ հետաքրքրել են հայ կոմպոզիտորներին։ Նրանք այդ պարերը օգտագործել են իրենց ստեղծագործություններում։ Արամ

Խաչատրյանը օգտագործել է հայկական պարեր և պարեղանակներ <<Գայանե>> բալետում: Սովորողները հաճույքով են ունկնդրում հատվածներ <<Գայանե>> բալետից, որոշում, թե որ պարն է հարմար տղաների, որ պարը՝ աղջիկների կատարման համար: Երբ հնչում է Էդ. Միրզոյանի <<Տիկնկիների պարը>>, սովորողներն որոշում են պարի բնույթը. այն թեթև պար է, հնչում է մեղմ, հնչյունները բարձր են: Ուսուցիչն առաջարկում է ունկնդրել Ա. Լուսինյանի <<Արջուկների պարը>>:

<<Տիկնիկների պարից>> հետո երեխաներն ավելի ակտիվորեն են ընկալում <<Արջուկների պարը>>: Սովորողներն ավելի ճիշտ են կողմնորոշվում, կերպարների հաղորդումը մատչելի է դարձնում երաժշտության ընկալումը: Այս պարը կարող են կատարել արջը, փիղը, որովհետև այն ավելի ծանր է, ուժեղ է հնչում, դանդաղ է: Այսպիսի հետևության են գալիս երեխաները:

Պարը սովորողների երաժշտական ընդհանուր զարգացման միջոցներից է: Կոմիտասն ասել է. <<Երգն ու պարը կանոնավորում են մեր զգացմունքները, հոգևոր աշխարհը, օգնում մեր մեջ և շրջապատում տեսնել և զգալ գեղեցիկը>>: Պարը միաժամանակ, հղկում և կատարելագործում է երեխաների շարժումները, օգնում տարածության և ժամանակի մեջ արագ կողմնորոշվելու: Պետք է աշխատանքները այնպես կազմակերպել, որ հնարավոր լինի ուսուցման պրոցեսում պարն օգտագործել: Պետք է հնարավորություն տալ, որպեսզի երեխաները պարեն: Այս իմաստով, դպրոցում ուսուցվող պարերը շարժումային և կառուցվածքային տեսակետից պետք է լինեն պարզ և մատչելի: Պարերը հետապնդում են նաև մի այլ նպատակ՝ երեխաների շարժումները դարձնել ավելի նրբագեղ և ճկուն: Սովորողների դաստիարակության և մտածողության զարգացման կարևորագույն միջոցներից են երաժշտական խաղերը: Դրանք դրական ազդեցություն ունեն երեխաների բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար: Խաղերի ընթացքում ամրակայվում են երգչային կարողությունները, զարգանում են երեխաների երաժշտական լսողությունն ու հիշողությունը, բացահայտվում են երեխաների հետաքրքրությունները: Երաժշտական խաղերը պետք է երեխայի մեջ առաջացնեն հույս, ապրումներ, ուրախություն պատճառեն: Երաժշտության դասերին կարելի է անցկացնել հետևյալ խաղերը.

Խաղ <<Հայելի>>

Ուսուցիչը երգելով պարզ մեղեդի՝ (օրինակ, <<Արև-արև>> հայկական ժողովրդական երգը) կատարում է ժողովրդական պարին յուրահատուկ պարզ շարժումներ։ Երեխաները ընդօրինակում են ուսուցչի շարժումները, նույնությամբ կրկնում <<Ինչպես հայելի>>։

Խաղ <<Գուշակիր, ո՞վ է երգում>>

Երեխաներից մեկը դեմքով կանգնում է դեպի գրատախտակը։ Մյուսները կատարում են <<Անտառում>> երգը։Երգի երրորդ ֆրազը կատարում է մեկ հոգի, իսկ չորրորդը նորից կատարում է ամբողջ դասարանը։ Գրատախտակի մոտ կանգնած երեխան ձայնի տեմբրով պետք է ճանաչի,թե ո՞վ էր մենակ երգողը.

Խաղ <<Տափկնոցի>>

Երեխաները երգում են իրենց սովորած երգերից մեկը, իսկ մեկ ուրիշը ղեկավարում է աջ ձեռքով։ Ղեկավարող երեխան երգելու ժամանակ ձախ ձեռքի ցուցամատը մոտեցնում է շուրթերին, դրանով ցույց տալիս, որ երգը պետք է կատարել <<մտքում>>, ոչ բարձրաձայն։ Երեխաները երգում են <<մտքում>> և հետևում ղեկավարող երեխայի աջ ձեռքի շարժումներին։ Ղեկավարող երեխան ձախ ձեռքի ցուցամատը հեռացնում է շրթունքներից, որը նշանակում է՝ պետք է երգել բարձրաձայն։

Ուսումնական տարվա վերջում շատ կարևոր են դաս համակարգների կազմակերպումը։ Ա յս դասին հրավիրում են ուսուցիչներ, ծնող, բարձր դասարանցիներ։ Դասի նպատակն է՝ պարզել երեխաների կողմից տարվա ընթացքում անցած թեմաների յուրացման մակարդակն ու խորությունը։ Դաս-համերգի ընթացքում կարելի է հնչեցնել երգեր, որոնք ծանոթ են և՛ ծնողներին, և՛ աշակերտներին, և՛ հյուրերին։ Վերջում դրանքպետք է երգեն բոլորը միասին։

Երաժշտությունը հնարավորություն է տալիս կազմակերպելու միջառարկայական կապերով դասեր։ Օրինակ, երկրորդ դասարանում

<<Փոքրիկ Շոպենը>> նյութն անցնելիս, տեղեկություն է տրվում Ֆրիդերիկ Շոպենի մասին: Կարելի է, սովորողներին հանձնարարել իրենք տեղեկություններ հավաքեն Շոպենի մասին: Դասին զուգահեռ, սովորողներն ունկնդրում են Շոպենի ստեղծագործություններից: Նրանք նկարագրում են, թե ի՞նչ պատկերներ են տեսնում: Դասի ընթացքում սովորողները նկարագրում են երեկոյի և գիշերվա երաժշտական պատկերները, որոնք քուն բերեցին երեխաներին և այն պատկերը, որն արթնացրեց նրանց: Սովորողները զգում են երաժշտության կախարդիչ ուժը, համոզվում, որ երաժշտությունն ազդում է մարդու զգայարանների վրա, խորհելու, մտածելու առիթ տալիս: Տաղանդավոր նկարիչ Մ.Սարյանն ասում էր, որ ինքնաշխատանքի ժամանակ երգել է՝ որևէ ժողովրդական երգ կամ օպերայի արիա: Հնարավոր չէ ապրել առանց երաժշտության:

Եզրակացություն

Այսպիսով՝ ներկայացված աշխատանքը հնարավորություն կտա ուսուցիչներին իրազեկ դարձնել մեթոդների կիրառության արդյունքում սովորած աշխատանքների ճիշտ իրագործմանը: Մեթոդների միջոցով է, որ իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին:

Մեթոդների կիրառման շնորհիվ է, որ զարգացնում են սովորողների մտավոր և զգայական կարողությունները:

Օգտագործված գրականություն

1.Վ. Ա. Սուխոմիլինսկի - <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>>

2. Յու. Վ. Յուզբաշյան - <<Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը>>: